

659

Ch - 45



891.99



Ա Գ Ե Լ

Կ - ԱՀ

# ՎԱՐԺՈՒՀՀԻ

Պատկեր հայ-թուրքական ընդհարումներից

1 + 0



Թ. Ի Վ Լ Ի Ծ

Տպարան «Հերմէս», Մադաթեան փող. տ. № 5.

1906

(197)

36 FEB 2013



1957-58

Վ. Ա. Բ. Ժ. Խ. Հ.

I

Տիսուր էր նա որպէս գիշերւայ խաղաղ  
լուսինը, որ հանգարտ լոզում է նուրբ, թա-  
փանցիկ ամպերի մէջից. մոայլ էր նրա գե-  
ղեցիկ գէմքը, որպէս ամպամած երկինք,  
որտեղից ոչ մի լոյսի նշոյլ չի ծագում,  
նման Մասիսի կատարին, կարծես մշուշ  
էր բարձրանում նրա պարզ ճակատից. աշ-  
քերը՝ իբրև խաղաղ ծով, հանգարտ, բայց  
վառ նայում էին մի նկարի, որ կախւած  
էր սեղանի վրայի պատից, նրա գէմքի  
փոփոխական արտայատութիւնից կարելի էր  
նկատել, որ նրա սիրտը յուզվում էր իբրև  
փոթորկալի ծով, ուր ոլիքները լեռնանում  
են և իրար խփելով փշրվում ու հրհելով  
գէպի ափն են զիմում. Նոր ստացւած լր-  
բազրի համարները անկարութափթված էին  
սեղանի վրայ:

— Աստւած իմ, — մըմնջեց ինքն իրան, —

մինչև երբ, միթէ այս բոլորին վերջ չի լինելու, միթէ դու չը կշտացար հայի արիւնից... Բայց, ոչ: Դու սիրում ես արիւն, թո ստեղծագործութեան օրերից մինչև այժմ արիւն է հոսում, և միայն այդ արեան մէջ է, որ մարդկային ազգը դիմում է յառաջ, դէպի կատարելագործութիւն: Գուցէ, գուցէ մի օր վերջ կը լինի այդ բոլորին... Բայց հայի ցաւը մեծ է, նրա վերքերը շատ են ու խոր, իսկ ուր է դարմանը... Նրա ծով աշքերից ցայտեց երկու կաթիլ արտասունք և աղամանդի նման սկսեցին փայլել նրա բերերի վրայ: Նա ձեռք առաւ լրագրի համարներից մինը, շուռ-մուռ տւեց, նայեց մի փոքր և դարձեալ ձեռքիցը զցեց:— Դարձեալ կոփւ, դարձեալ արիւնեղութիւն: Ինչու Արամը ոչինչ չի գրում, ոչինչ չի յայտնում, միթէ այս արեան-արտասունքի օրերում նա անտարբեր է կամ ուրիշ բաների մասին է մտածում... Ո՞չ, ես նրան ճանաչում եմ, նա չի կարող այդպէս լինել. գուցէ ինձ չը վշտացնելու համար առանց ինձ յայտնելու է գնացել և այն հերոսական կոփւներում՝ ժամանակ չի ունենալ նամակ գրելու, բայց նա արդէն զիտէ, որ ես իրան սիրում եմ իրեկ անվախ քաջի, իրեկ ազնիւ հերոսի,

նա դիտէ որ ես կռւից ու մահից չեմ վախ-  
նալ. գուցէ մի անսպասելի դէպք պատա-  
հած լինի...

Մինչ նա այսպիսի մտքերով էր զբաղ-  
ւած, կարծես կրակի ալիքների մէջ ընկած  
մի ելք էր փնտուում և չէր գտնուում. կամա-  
ցուկ բացվեց սենեակի գուոր և սպասա-  
ւորը դանդաղ ներս մտնելով առաց.

— Վարժուհի, Կարօն քաղաքից եկաւ և  
ահա այս նամակը բերեց:

Վարժուհին առաւ նամակը, նայեց հաս-  
ցէին: «Այս, սա նրանից է, Արամից»: Շը-  
տապով բաց արեց և կարդաց հետեւալ խօս-  
քերը:

— «Սիրելի Արմէն! Արտիս ուժեղ ձայ-  
նը հարկադրում է ինձ մի վտանգաւոր ճա-  
նապարհորդութիւն կատարել, հաւատում եմ,  
որ գու երեւակայում ես դէպ ուր և յոյս ու-  
նիմ, որ չես վշտանալ. բայց մեկնելէս ա-  
ռաջ կը գամ քեզ մօտ հրաժեշտիս ողջոյնը  
տալու: Քո Արամ»:

Աւելի խիստ սկսեց բարախել նրա սիր-  
ութ: Մի կողմից այն միտքը՝ թէ նա կը գնայ  
գուցէ անդառնալի կերպով՝ խոր վիշտ էր  
պատճառում, միւս կողմից, որ նա կը գնայ  
կատարելու մի վէճ և սուրբ գործ, որ ա-

մեն մի հայի պարտականութիւնն էր համարում, այն ցանկութիւնը, որ նա ուզում էր իւր սիրած տղամարդը անպատճառ քաջի, հերոսի համբաւ ունենայ և որ՝ վերջապէս, ժամանկ կունենայ տեսնել նրան, խօսել հետը՝ սփոփում էր իրան և նա ցանկանում էր, որ շուտով կատարւէր ամեն բան:

Անցաւ երկու օր, որոնք տարբիների չափ երկար էր թւում Վարժուհուն, Արամը չը կար:—Ուր է նա արդեօք, ի՞նչու չեկաւ, չը լինի խարեց և առանց իրան տեսնելու գնաց... ոչ, նա այդ չի անիլ, կը գայ անպատճառ: Այսպէս մտածելով, ամեն անգամ աշակերտուհիներին արձակելէն յետոյ, նա դուրս էր գնում սենեակից, շրջում էր ճանապարհների մօտերը, աչքերը յառած հեռու հորիզոնին, որտեղից, նժոյզի վրայ նըստած պիտի յայտնուէր իւր սիրելի Արամը: Աշակերտուհիները պատմում էին թէ երկու օրս վարժուհին շատ ախուր է երկում և դասի ժամանակ՝ շփոթվում է:

— Է՞ն, տղերք, նա էլ հայի ընդհանուր ցաւերով է վարակւել.—ասաց քահանան,— գնանք, տեսնենք ի՞նչ նոր լուր կայ, ուրախացնենք նրան:

Քահանան, ուսուցիչը, տանուտէրի  
որդի Խաչօն և Կարօն, մի թափառական ար-  
հեստաւոր ուղեորդեցան դէպի վարժու-  
հու բնակարանը. սրանք գրեթէ նրա մշտա-  
կան այցելուներն էին: Ճանապարհին ասում  
էր քահանան:

— Դուք դեռ ոչինչ չէք տեսել, ես ան-  
ցել եմ արդէն արիւնի ու կրակի միջից և  
նրանց ալիքները ինձ այստեղ ձգեցին. որ-  
քան զոհեր եմ տեսել այս իմ աչքերով,  
դուք երևակայել չէք կարող, և այդ բոլորը  
այնպիսի խոր վէրքեր են բացել իմ սրտի  
խորքերում, որ ես այժմ այլևս ուժ չունեմ  
ձեռքերս շարժելու, բայց սրտիս վէրքը միշտ  
տանջում է ինձ: Երբ ես առաջի անգամ  
այս կողմերն եկայ և ծանօթացայ նրա ծնող-  
ների հետ, նա զեռ փոքր էր, և ամեն ան-  
գամ երբ նա լսում էր իմ պատմութիւն-  
ներս՝ աչքերը արտասունքով էր լեցվում,  
վազում էր ինձ մօտ և ասում. «Տէր-հայր,  
ինձ մի փոքրիկ ատրճանակ առ, ես կըդ-  
նամ վրէժ լուծելու:» Այս տարի ես նրան  
ասացի, որ զէնքի հետ մենք պիտի ունե-  
նանք և զիտութիւն, առաջարկեցի գալ մեր  
զիւղում վարժուհի լինել, նա չը մերժեց,  
և այժմ, նա աշխատում է իւր քոյր զեղ-

ջկունիներին լոյս տալու, մարդասիրութեան և հայրենասիրութեան սերմեր ցանել, և տեսնում էք, որ նրա ցանած սերմերը մըտնելով նրանց անարատ, անմշակ սրտերի մէջ՝ ապարդիւն չի անցնում, տեսնում էք ինչպէս բոլորը նրան սիրում ու յարգում են, ինչպէս և ես սիրում եմ նրան իրքե հարազատ զաւակի, որովհետեւ նրա մէջ գանում եմ իմ բաղձանքների մարմնացումը. ջանանք փարատելու նրա տիմրութիւնները:

— Շատ լաւ աղջիկ է մեր վարժունին, ասաց Խաչօն, ևս էլ նրան սիրում եմ և չեմ ցանկանում, որ երբէք նա տիրի, նրա վարդի թշերը խամրին, ծով աչքերը պղտորւին, նա կատարեալ հրեշտակ է ինձ թւում:

— Դուք պէտք է համեստութիւնից շատ հեռու չդնաք, — պատասխանեց ուսուցիչը, կարծես մի նախանձից դրդւած, իրան վիրաւորւած համարելով, իսկ կարօն նրանց ետևից գաղտնի բոււնցքներ էր շարժում:

Նստել էին վարժուհու բնակարանում քահանան և երեք երիտասարդները. վերջինների արտայայտութիւնից երեսում էր, որ նրանք միմեանց ներկայութիւնից դժգոհ էին, ամեն անգամ երբ վարժունին ուշադրութիւնը դարձնում էր մէկին և նրա հետ խօ-

սում, միւսները գլուխները կախած, կարծես չէին ցանկանում տեսնել: — Դուք, ասացնա, լսում էք ամեն կողմից արեան ձայներ, ինչ էք մտածում և ինչով էք ուզում օդնել, անշուշտ զգում էք, որ այսպիսի ժամանակներ անտարբեր մնալը մահացոյանցանք է: — Է՞ն, Վարժուհի, — ընդհատեց Խաչօն, — ամեն անգամ ձեր «ինչերով զահլա էք տանում, մենք դեռ երիտասարդ ենք, մեզ հարկաւոր է քէֆ, սիրել ու սիրվել, իսկ ձեր «ինչ»-երին թող պատասխանեն քահանան ու մեր մեծերը:

— Խաչօ, ես ցաւում եմ, որ իմ աշխատանքս ի զուր պիտ անցնի, և դուք ոչ կուղղվիք և ոչ էլ մարդ կը դառնաք: Դուք ինչ էք մտածում, պլ. Արտաշէս, — դարձաւ վարժապետին:

— Ես, պատասխանեց վարժապետը, աշխարհի և քաղաքականութեան համար ունիմ լայն հայեացք, առայժմ իմ պարտականութիւնս եմ ճանաչում միայն՝ փոքրիկներին կրթել և նրանցից իմ ցանկացած մարդիկ պատրաստել, իսկ զաղափարներս արծարծելու համար, դեռ մեր գիւղում հող չեմ զտել, ուստի և ես հրաժարվում եմ պատասխանել ձեր «ինչ»-երին: — Իսկ ես պատ-

ըստ եմ կատարելու ձեր բոլոր ցանկութիւնները, որքան կարող եմ, ընդհատեց կարօն:

—Կեցցես, դու կարօ, ես քեզ ամենից շատ եմ յարգում, ասաց վարժուհին: Միւսները գլուխները կախեցին, կարծես զղալով իրանց պատասխանները:

II

Ապրիլի գեղեցիկ օրերից մէկն էր, երբ Արամը եկաւ: Արևն արդէն բարձրացել և խըր կենսատու—ճառագայթներով լուսաւորել էր գիւղի վերի ձորի արևմտեան լանջերը, ուր, թփերի մէջ, երգում և ծլվլում էին անհամար թռչնիկներ, իսկ ձորի միջից, քարերին խփելով, գարնանային յորդահոս ջուրը կչկչալով, արագընթաց հոսում էր: Այնտեղ մի փոսիկում կանանչներով շրջապատւած մի մեծ քարի վրայ նստած, խօսում էին սիրաբորբոք զոյզը:

—Ի՞մ պաշտելի Արմէն,—ասում էր Արամը,—դու գիտես, որ իմ սէրը անկեղծ և անսահման է դէպի քեզ. քեզ սիրում եմ որքան մարդ արարածին սահմանւած է սիրել, բայց մեր վրա կայ դրուած մի մեծ

և վէհ պարտականութիւն,—դա հայրենիքի  
սէրը, մերձաւորի պաշտպանութեան խնդիրն  
է։ Այժմ՝ երբ հրդէնը բռնկուել է մեր եր-  
կրում, երբ արեան ու արտասունքի հեղեղ  
է հոսում և նրանցով ոռոգվում մեր սիրա-  
սուն հայրենիքի լեռն ու ձորը, դաշտն ու  
անզը, երբ մեր հարիւրաւոր քոյրեր և մայ-  
րեր բռնաբարվում են և անգութ թշնամու  
սրին զոհ դառնում և շատ կոյսեր զրկում  
են՝ իրանց նոյնպէս սիրած ու սիրւած տը-  
ղամարդկանցից—ես յանցանք եմ համարում  
և չեմ կարողանում լինել անտարբեր՝ նստել  
քեզ հետ և միայն մեր սեփական երջան-  
կութեան և բախտաւորութեան մասին մտա-  
ծել։ Այս, երբ մեր շուրջը տիրում է սուզ,  
մենք երբէք չենք կարող ուրախ լինել։ Վըս-  
տահ եմ, որ դու էլ համաձայն ես ինձ հետ,  
չէ՞ որ դու ինքդ էիր ներշնչում ինձ այն,  
ինչ որ այժմ ես եմ ասում, չէ՞ որ քո այդ  
գեղեցիկ խօսքերով ու գաղափարով զըաւե-  
ցիր իմ սիրաը, և, հաւատացիր, սիրելիս, որ  
այն օրից սկսեալ ես ինձ համար չեմ ապ-  
րում. և վճռել եմ գնալ, միայն դու...

— Օ՛, Արամ, այժմ աւելի քան երբէք  
ես սիրում եմ քեզ, սիրում եմ հոգոյս բո-  
լոր կարողութեամբ, որովհետեւ այժմ դու

ոչ թէ միայն զգում ես, այլ և աշխատում  
ես կատարել այն, ինչ որ իմ միակ ցան-  
կութիւնս և ամեն հայ երիտասարդի պար-  
տականութիւնն է։ Ո՞քան բախտաւոր կը  
լինէին հայ աղջիկները, եթէ նրանք բոլո-  
րը ինձ նման սիրեցեալներ ունենային, հա-  
ւատացած եմ, որ մեր արիւնաներկ երկի-  
րը՝ շուտապ գրախտի կը փոխուէր, իմ պաշ-  
տելի Արամ։ Բայց ի՞նչ էր նշանակում քո  
վերջի «զու»-ն։ Գուցէ զու մտածելով իմ  
մասին մհատվում ես, զուցէ իմ սէրը գե-  
րադասում ես հայրենիքի սիրուց, կամ թէ  
կասկածում ես, որ ես կասեցնում եմ քեզ քո  
նպատակից, կամ կը տիրեմ։ Ո՞չ սիրելիս,  
քո այդ որոշումը բարձրացնում է քեզ իմ  
աչքիս, սիրոս լեցվում է հրճուանքով. զնա,  
մի յուսահատւիր. իմ սէրը թող քեզ չը  
թուլացնի, այլ ոյժ տայ, թուլամորթ և վախ-  
կոտ տղամարդին ես երբէք սիրել չեմ կա-  
րողանում, թէկուզ նա ինձ ոսկու և ակնե-  
ղէնի մէջ թաթախի, զնա, կոռուիր, պաշտ-  
պանիր մեր անարգուած քոյրերի պատիւը,  
հանգցրու հայրենիքում բռնկուած հրդէնը  
Երբ վերագառնաս փառքով, իմ ամբողջ  
էութեամբ նւիրվում և սիրում եմ քեզ,  
իսկ եթէ զոհ զնաս անողորմ կրակին, մենք

երկնքում իրար կը գտնենք, ես այսաեղ քեզ  
համար դափնեայ պսակ կը հիւսեմ։ Երդ-  
վում եմ, որ քեզնից յետոյ, ոչ մի տղա-  
մարդ չի կարող տիրել իմ սրտին. զնա,  
հոգիս, էլ մի ուշանալ։ Բայց, Արամ որ-  
քան կը ցանկանայի լինել քեզ հետ, փայ-  
լուն զէնքերով զարդարւած, մենք միասին  
մեծ ոյժ կը կազմէինք…

— Ո՞չ, Արմէն, մենք բաժանված ա-  
ւելի մեծ ոյժ ենք կազմում։ Դու ուսմամբ  
և գիտութեամբ լուսաւորիր մեր խաւար  
կեանքը, իսկ ես իմ սրովս կը պաշտպանեմ  
նրան, այդ է մեր իրականութիւնը, ոյժ և  
լոյս, այս պիտի լինի մեր նշանաբանը. մեր  
գերերը բաժանված են, աշխատենք կա-  
տարել օրինաւոր և օրինակելի։ Թփերի  
մէջ վխտացող թռչունների իրարանցումն  
ու ճվճվոցը զրաւեց նրանց ուշադրութիւն։  
Տես, Արմէն, ահա բազէն ինչպէս յարձակ-  
վեց թռչնիկների վրայ և խլեց մի ձագուկ՝  
տես, տես, ինչպէս հաւաքվեցին թռչնիկ-  
ները, յարձակվեցին բազէի վրայ, մտան  
թերի տակ, թառեցան մէջքին, զլիսին և  
ամեն կողմից զցզցում են։ Օ՛, կոիւ է  
սոսկալի... ահա... ահա... և վերջապէս ա-  
զատեցին իրանց ձագին։ Ո՞րքան քաղցր և

վէճ է արիւնակցական զգացումը, նոյնիսկ  
թոշունների մէջ։ Գեղեցիկ զուգագիպու-  
թիւն, հրաշալի օրինակ ինքնապաշտպանու-  
թեան, թոշունների հաւաքական դիմադր-  
ութիւնը իզուր չանցաւ.... Ուշանում եմ,  
թանգագին Արմէն, ընկերներս արդէն ան-  
ցած կը լինին, գնամ, գնամ ազատելու  
շատ փախցրւած ու գերւած մեր ձագուկ-  
ներին։ Մնաս բարեաւ, աղօթիր ինձ համար։

Նրանք գրկախառնուեցան, փոխադարձ  
համբոյըններով կնքեցին անջնջելի սիրոյ դա-  
շինքը և Արամը բաժանեց...

Վարժուհին մնաց մենակ։ Այժմ կար-  
ծես նա ոչինչ չէր տեսնում, ոչ ջրի կը-  
կչոցը, ոչ թոշունների թոշկոցն ու ծղըր-  
տոցը և ոչ արևի գեղեցիկ լոյսը՝ նրան չէ-  
ին գրաւում։ Ներքին մի ջերմութիւն և սրտի  
արագ թրթուցն էր միայն զգում։ Նա այս-  
տեղ, այս մենաւորութեան մէջ նմանում էր  
Ջրային հաւերժահարսի, որ խաղում է ա-  
ռաւօտեան արեգակի ճառագայթների հետ։

### III

Անցաւ մի ամիս, Արմէնը շարունա-  
կում էր իւր գերը՝ հոգեկան սաստիկ ա-

լեկոծութեան մէջ։ Նա այժմ աւելի եռանշդով ու ոգևորութեամբ էր խօսում օրւայ հրատապ հարցերի մասին իւր այցելուների հետ, յորդորում էր նրանց միանալ և ինքնապաշտպանութեան միջոցներ պատրաստել, պատմում էր թոչնիկների հետ պատահած դէպքը, յիշեցնում վերահաս վտանգը, և այժմ աւելի հետաքրքրութեամբ կարդում էր լրագրներում օրւայ նորութիւններ, ամեն անզամ ուշադրութեամբ փնտռելով Արամի անունը, բայց նա չկար...

Գարնանային մեղմ հովիկը փշում էր և շոյում Արմէնի գեղեցիկ գանգուրները, զովացնում նրա այլրող սիրար, վերջալոյաի շեշտակի ճառագայթները անցնելով այն լուսամուտից, որի առաջ նստած էր նա, մի տանձին փայլ էին տալիս նրա գեղեցիկ դէմքին և ցոլացնում ֆոփուն մազերը, նա ձեռքը ծնոտին դրած լսում էր ծառերի վրայի թոչնոց երեկոյեան գայլայլիկները, մտածում էր Արամի մասին, թէ նա ուր է արդեօք, նա մաքով վերազարձել էր դէպի այն վայրերը, ուր այժմ գանգում է իւր սըտի իդէալը և մեղմիկ ձայնով ինչ որ երդ էր մրմնջում։ Հեռուից երևաց քահանան մի ճերմակ թուղթ ձեռին, նա շտապ

քայլերով մօտ եկաւ. և ահա ձեզ դարձեալ  
մի նամակ, ասաց, անշուշտ լաւ լուրեր կը  
կարդաք այստեղ:

—Շնորհակալ եմ, Տէր-հայր, ասաց  
վարժուհին և առաւ նամակը քահանայի  
ձեռքից և առանց վրան նայելու բաց ա-  
րեց:—Սա հօ Արամի գիրն է.—ասաց, ար-  
դեօք երազ է, թէ իրականութիւն: Նա ըշ-  
տապավ նայեց ստորագրութեան: Այս, այս  
նրանից է, և սկսեց կարդալ:

—«Սիրելի Արմէն,—զրում էր նա,—  
մինչեւ այժմս սիրտս չի անջատւել քեզա-  
նից և յաւիտեանս այգպէս կը մնայ, հաւա-  
տում եմ, որ դու էլ ինձ չես մոռանալ,  
անշուշտ կազօթես մեզ համար: Ես այստեղ  
շատ ուրախ եմ և ինձ երջանիկ եմ զգում՝  
շրջապատած մի խումբ անձնուէր, կորիճ  
ընկերներով, որոնցից իւրաքանչիւրը չեմ  
փոխում աշխարհի բոլոր հարստութեան հետ:  
Տեսնէիր թէ ինչպէս առիւծանման տղերք  
են: Մահւան գնդակի ձայնը ոգևորում է  
մեզ և նրանց սուլոցների հետ երգում ու  
պարում ենք: Մենք երկու անդամ ընդհա-  
րում ունեցանք թշնամու հետ և երկու ան-  
դամն էլ յաղթական կերպով գուրս գալով՝  
հալածեցինք թշնամու խառնիճաղանձ բազ-

մութիւնը՝ ազատեցինք մի քանի գիւղերի  
գոյութիւնը վտանգից: Մեր սարսափը մեծ  
է թշնամու վրայ, իսկ հայ գիւղացու ու-  
րախութիւնն ու ոգեորութիւնը դու երեա-  
կայել չես կարող, նրանք շատ անդամ մա-  
սազներով են մեզ գիմաւորում: Այժմ մենք  
թափառում ենք լեռների վրայ, մեր բնա-  
կարանն է ժայռերի ծերպերը, որտեղից  
հսկում ենք թշնամու յարձակումներին: Մեր  
լապաերն է պարզ լուսինը, որի վրայ երբեմն  
տեսնում եմ քո հրաշագեղ դէմքը և աւելի  
ոգեորգում: Հաւատացիր, հոգիս, որ աշխար-  
հի վրայ չկայ աւելի ուրախ և երջանիկ  
կեանք, քան հայ զինւորինը: Երբ խաչածե-  
փամփուշտները կրծքիս, դաշոյնն ու ատրը-  
ճանակը մէջքիս, հրացանը ձեռիս բարձրա-  
նում եմ ժայռերի կատարներ՝ ինձ զգում  
եմ բոլորովին ազատ, աշխարհի իշխողներից  
երջանիկ, ազատութիւն եմ ներշնչում և  
ազատ երգում եմ քո սիրած կուի երգերից:  
Մահը՝ բոլորովին չքացել է իմ մտքից: Բը-  
նութեան ահը չի համնում այստեղ: Իսկ  
երբ փախչում է թշնամին և ես զետակցում  
եմ, որ շատ կեանքեր փրկուեցին՝ ուռա-  
նում է սիրտս մի ուրախ բաւականութեամբ,  
որ դժուար է երեակայել: Գիտեմ, նա-



խանձում ես իմ դերին, բայց ինչ արած,  
ինձ այս է վիճակւած, իսկ քեզ՝ այդ, ար-  
դիւնքը մենք հաւասար կը բաժանենք։ Պա-  
տահում է, որ մենք օրերով քաղցած ենք  
մնում, բայց այդ ոչոքի չի թուլացնում կամ  
տիրեցնում. միայն փամփուշտի պակասու-  
թիւնը երբեմն շփոթեցնում է մեզ, իսկ մեր  
հարուստները, հօ գիտես, աւելի շուտով թրշ-  
նամուն կողոպտել են ուզում իրանց թաղ-  
ցրած ոսկիները, քան մի դրամ փամփուշտի  
զին տալ մեզ։ Անշափի շնորհակալ կը լինէ-  
ինք բոլորս էլ, եթէ հնար գտնէք մեզ մի  
փոքր ոյժ հասցնել։ Նամակիս շուտ մի սպա-  
սիր, որովհետեւ գրելու ժամանակ հազիւթէ  
ունենամ։ Միշտ շարժման մէջ ենք։ Քո Ա-  
րամ»։

Նամակը խոր սպաւորութիւն թողաց  
վարժուհու վրայ։ Վերջի խօսքերը՝ կարծես  
սլաքի նման ցցուեցան նրա որտի մէջ։—  
Տեսնում էք, տէր-հայր, — ասաց նա, — Արա-  
մը ամեն կերպ ուրախ է և դռն, միայն  
փամփուշտի պակասութիւնն է շփոթեցնում  
նրանց։ Ախր ի՞նչու են թաղցնում մեր հա-  
րուստները իրանց ոսկինները, մի՞թէ նրա  
համար, որ թշնամին գայ կողոպտէ և իրանց  
սրբութիւնները անարգէ։ Ամօթ։ Այդպիսի

անունները թող մնան պատմութեան սև է-  
ջերին, խոկ մենք այժմ և եթ սկսենք գործի,  
բաց անենք կամաւոր հանգանակութիւն, ես  
յուսով եմ, որ մեր զիւղացիք չեն մերժիլ  
փոքր, բայց յարգելի, նւերներով օգնել մեզ:

Վարժուհին չը յուսախարւեց: Մի քանի  
օրից յետոյ արդէն պատրաստ էր մի կլորիկ  
գումար: — Ի՞ն, Կարօ, — տուաց նա, — դու ա-  
մենից շատ ես շրջել և բաւական փորձառու  
ես, փողը կը յանձնենք քեզ և քո պարտա-  
կանութիւնն էլ թող լինի ապրանք ճարել:  
Կարօն, որ միշտ պատրաստ էր վարժուհու  
խոսքերի համար ամեն մի անձնազոհութեան,  
անմիջապէս ուղևորվեց դէպի մեծ քաղաքներ:

#### IV

Դպրոցական արձակուրդի ժամանակ-  
ները արդէն հասել էին: Վարժուհին իւր  
աշակերտուհիների տարեկան քննութիւնները  
յաջող աւարտելէն յետոյ՝ մեկնեց դէպի  
իւր ծննդավայրը: Բոլոր աշակերտուհինե-  
րն ու գեղջկուհիք՝ ճանապարհ գրին նրան  
բարի երթ մաղթելով: Շատերը լաց էին լի-  
նում «սիրելի քոյր»իկից բաժանվելու առ-  
թիւ, իոկ նա նրանց մխիթարում էր, թէ

դալող տարի անսպատճառ իրանց մօտ կը լինի....:

Կարօն արդէն եկել էր: Երէկոյեան մի մութ նկուղում, փոքրիկ լամպի աղօտ լոյսի տակ, կարծես մի զինարան էր բացվել: Թափթփւած էին բաւական փամփուշներ, զանազան տեսակի ատրճանակներ, և երկու տղամարդ ու մի կին շտապ-շտապ գարսում, կապոտում էին նրանց: Կարօն վեր էր առնում նրանցից իւրաքանչիւրը և պատմում էր թէ ինչպէս և ինչ միջոցներով էր ձեռք բերել: Արմէնը շատ հաւանելով մի ատրճանակի, նրան իւր զրպանը զրեց և գովեց կարօի ճարպիկութիւնն ու հնարագիտութիւնը, խոստացաւ, որ առաւօտ կառնեն: ապրանքը և միասին ճանապարհ կընկնեն:

— Դու, կարօ,-ասաց նա—չես կարող երեակայել, թէ որքան ուրախ կըլինին մեր տըղերքը, երբ մենք յաջողութեամբ այս բեռը նրանց մօտ կը հասցնենք, հաւատում եմ, որ դու այլևս նրանցից չես բաժանուիլ:

— Իսկ ես կ'օրհնեմ ձեր ճանապարը և դուք անվսաս կընասնիք, ասաց քահանան: Կարօի ուրախութիւնը չափ ու սահման չունէր, նա իրան շատ բախտաւոր էր համարում, որ հնարաւորութիւն ունի երկար

ճանապարհորդութիւն կատարել Արմէնի  
հետ և ցոյց տալ նրան իւր ճարպիկութիւ-  
նըն ու խորամանկութիւնը: Ամբողջ գիշեր  
նրա քունը չը տարաւ, միշտ մտածում էր  
իւր անելիքի մասին և նրան թւում էր թէ  
զիշերը շատ է երկարում:

Մայիսեան մի գեղեցիկ առաւօտ էր,  
դեռ արևի առաջին ճառագայթները լուսա-  
ւորել էին միմիայն բարձր լեռների գա-  
գաթները, դեռ ճանապարհներում կենդա-  
նութիւն չկար, երբ մեր ուղեորները հա-  
սան մի ընդարձակ գաշտի: Մեզմ հովիկը  
շոյում էր նրանց դէմքը և խաղում Արմէ-  
նի մազերի հետ, իսկ թարմ օդի մէջ ճախ-  
րող թռչունները իրանց ճռվողիւններով  
կարծես յաջողութիւն էին մաղթում: Մի  
զոյգ հաստավիզ եզներ քաշում էին սայլը,  
որի վրայ բարձել էին մեր ճանապարհորդ-  
ները իրանց իրեղէններով: Սայլապանը մի  
զիւղացի, յաղթանկամ տղամարդ, ոտքից  
զլուխ զինւած՝ քշում էր եզներին և ըթի  
տակից երգում:

Գարունն եկաւ, իմ դարդերս

Զըերի պէս յորդացան,

Պարզ արևի ջերմութիւնից

իմ ցաւերս աճեցան

Գարունն իր հետ ինձ չը բերեց  
Ապաս կեանքի ուրախ օր,  
Սիրուն արեն անցաւ, գնաց,  
Դեռ չեմ լծել իմ արօր:

Մեր արտերը խոպան մնաց,  
Խոփս է պատում ժանդոտել,  
Իսկ թշնամին գաղանի պէս  
Եզներիս է բզկտել:  
Էսպէս գարուն գնայ, չդայ,  
Մենք լուծ, արօր թողել ենք,  
Մեր պատիւը պաշտպանելու  
Սուր ու հրացան գրկել ենք:

Կեանքիցս բարձր էք, գնւք իմ զէնքեր,  
Եւ ձեզ մատաղ, քաջ տղերը,  
Դուք ձեր կեանքով և արիւնով,  
Հային գարուն կը բերէք:

Սայլապանը վերջացրեց իւր երգը: Նա  
ամ էր քաշում սրտի խորքերից և մատով  
ցոյց էր տալիս ապրածութեան վրայ իրեա-  
ցող՝ գեռ ծխող զիւղերի աւերակները: — Ա-  
հա այստեղ, — ասում էր նա. — հայի շէն  
զիւղն էր, թշնամին՝ գաղանազողի յարձակւեց,  
աւերեց ու այրեց: Այստեղ արածում էր  
զիւղի ոչխարը, երբ յարձակվեցան, սպանե-  
ցին հովիւ Մատօին, թողին նրա նշանած  
Լուսիկին անմիթար, անտէր. խեղճը՝ սրտի

կոկծէն խելագարւեց։ Այն արտը հերկում էք Միքօն՝ երբ վրայ տւին, սպանեցին մաճկալին ու դատորին՝ և խեղճ Միքօն զրկուելով իւր սիրելի Մանիկից, քաշւեցաւ լեռը և միացաւ այնտեղ թառած, հայ գիւղերի պաշտպան՝ արծիւների խմբին։ Իսկ այն բլրակի ետեից բարձրացող ծուխը՝ գեռ երկու օր առաջ այրւած թրջական գիւղն է, որի բնակիչների արիւնի և կողոպուտի ծարաւը ծայրահեղութեան համանելով՝ յանդգնեցան յարձակվելու վ. գիւղի վրայ, ուր վրաւ հասան սարի արծիւները, փախցրին նրանց մինչև այստեղ՝ իրանց գիւղը, և քաջերի համբերութեան բաժակը լեցւած լինելով, այրեցին նրան։

— Իսկ ի՞նչ արին կանանց ու երեխաներին, հարցրեց օրիորդը։

— Նրանց շատ խնամքով ու պատռով պահեցին մի քանի օր և երբ աեսան, որ դիմագրութիւն չկար, բոլորին ազատ արձակեցին։

— Իսկ ես բոլորին կը կոտորէի, — ընդհատեց Կարօն, չէ՞ որ նրանք միշտ մեղչն խնայում։

— Ո՞չ, պարոն, գուք սխալվում էք, հայի մեծահոգութիւնը մոռանում, այն ժաման-

նակ մենք էլ նրանց պէս գաղան կը լինէինք: Տեմում էք այս դաշտը, այս լեռներն ու ձորերը.—մի քանի օր առաջ սրանք բոլորը աւազակների բոյներ էին, ոչ մի կենդանի չէր կարող այստեղերից ողջ անցնել, բայց այժմ շնորհիւ մեր քաջ տղերանց, շնորհիւ Արամի եռանդին ու խելքին, մերոնց իշխանութեան տակն է, և ամեն մինը կարող է ազատ անցնել այստեղից—սաց սայլապանը:

—Ռւբեմն Արամի դիրքերը շատ հեռու չեն այստեղից,—հարցրեց Արմէնը և նրա սիրտը մի անորոշ զգացմունքով սկսեց արոփել:

—Մենք այս դիշեր կը հասնինք.—պատասխանեց սայլապանը:

Ամբողջ տարածութեան վրա ոչ մի շարժում չկար, ոչ մի մարդ չէր երևում, կարծես մողական դաւազանի մի հարւածով՝ անշնչացել, քար էին կտրել բոլորը, միայն երեմն վախենալով թռչկոտում էին փոքրիկ թռչնիկներ և կռկռալով թափառում էին սև ագռաւներ, որոնց ներկայութիւնը սոսկում էր պատճառում մեր ճանապարհորդներին: Սայլը միշտ յառաջ էր գնում և երեկոյեան կողմ, մի ձորակի մօտ

կանգնեցրեց սայլապանը եղներին, որպէս-  
զի մի փոքրիկ հանգստանան:—Այստեղ ա-  
պահով է, մերոնք շատ մօտ են,—ասաց  
նա: Հազիւ հինգ բոպէ էր անցել երբ թը-  
փերի միջից լսուեց մի ուլի մկկոց: Նոյն-  
պէս պատասխանեց և սայլապանը:

— «Օրւայ անոնք»-լսւեց մի տղամարդ-  
ովի ձայն:—«Հերոս»—պատասխանեց սայ-  
լապանը:

Դուրս եկան հինգ տղամարդ սաքից  
դուխս զինւած:

— Ա՛, այդ դժւ ես, Միքէլ,—ասաց  
նրանցից մինը:—Տնաշէն քիչ մնաց, որ  
զնդակահար անէինք քեզ էլ, եղներիդ էլ,  
թէ և ու շացար, բայց լաւ ժամանակ  
հասար: Սուրհանդակները այսօր լուր բե-  
րին՝ թէ թշնամին մեծ բանակ է կազմել,  
մեծ պատրաստութեան մէջ է, հէնց  
այս գիշեր յարձակում է սպասվում: Տօ,  
մի ասա, շատ ապրանք, լաւ ապրանք բե-  
րել ես:

— Օ՛, շատ լաւը, Սմբատ, եղներիս  
հոգին ելաւ մինչև այստեղ հասցրին:

— Հապա ի՞նչու օրիորդին չը վերա-  
դարձրիք և թոյլ առիք, որ նա նեղութիւն  
քաշէ մինչև այստեղ գալու:

— Եա ինքը չուզեց:

— Իսկ այս պարոնը, Երեխ մեղ օգնելու է եկել:

— Ո՞չ, նա ուղեկցում և օգնում է օրիորդին:

— Սխալվում էք, թէ այդ պարոնը և թէ ես եկել ենք ձեզ օգնելու, և կը ցանկայի, որ այս գիշեր առիթ պատահէք ցոյց տալու մեր շնորհքը, ժպտալով ասաց օրիորդը:

— Օ՛, դուք չափազանց անվախ էք երեսում, օրիորդ, յամենայն դէպս, ես ձեզ կը խնդրէի նեղութիւն չը կրել, առանց այն էլ, մեր մի տասնեակը բաւական է թշնամու հարիւրակին վախուստ դարձնելու:

— Դուք կրկին սխալւում էք: Գուցէ վախում էք, որ ես՝ իրքև կին, կարող եմ թոյլ լինել և խանգարել ձեզ... այդ հայեացքով ինձ վիրաւորած կը լինիք:

— Ո՞չ, ոչ, օրիորդ: Ես հաւատում եմ հայ կնոջ սրտառութեան և անվեհեր տոկունութեան. մեր մեջ միշտ եղել են հերոսունիներ, որոնք հրաշքներ են գործել: Եթէ համենում էք, զոնէ մեր դիրքը մնացէք, որ աւելի ապահով է:

— Իսկ ես կցանկանայի վտանգաւոր

տեղ, գոնէ իմ՝ այս ատրճանակի շնորհքը  
ցոյց տալու:—Նա հանեց գըպանից ատրճ-  
ճանակը:—Ես պիտի գնամ մինչև Արամի  
դիրքը, որովհետեւ կարեոր յանձնարարու-  
թիւն ունիմ նրան յայտնելու:

Կան ժամանակներ, երբ մարդիկ հէնց  
առաջին տեսակցութիւնից շուտ մտերմա-  
նում են, որովհետեւ նրանց մէջ լինում է մը-  
տածողութեան, զգացմունքի համանմանու-  
թիւն: Սյդում էին մեր խօսակիցները, նր-  
րանք միմեանցից չը քաշւեցան, կարծես վա-  
ղեմի ծանօթներ լինէին: Կարօն զբաղւած  
էր միւս զինւորների հետ խօսակցելով, վեր  
էր առնում նրանց զէնքերը, նայում արնա-  
դում, փափուշաները հազնում թէ արդեօք  
սազ կը գայ իրան, կամ օրիորդը հաւա-  
նում է: Զինւորներից մինը վերադարձել  
էր գիրքերը և այնտեղից կարօի համար  
հրացան և փամփուշտակալներ բերեց: Կա-  
րօն այժմ վերջապէս կապեց զէնքերը և  
զինւոր դարձաւ, և նա շատ ուրախ էր իւր  
այդ նոր պաշտօնուի:

—Ապրիս, կարօ, — ասաց օրիորդը, —  
զէնքերը քեզ շատ սազ են գալիս: Հաւա-  
տում եմ, որ դու նրանց երբէք թշնամու-  
ձեռքը չես յանձնիլ:

— Դու դեռ Կարօին չես ճանաչում, —  
ինքնավստահ կերպով պատասխանեց նա, —  
քանի նա շնչում է, մի գնդակ անդամ ան-  
նպատակ չի անցնիլ:

— Օրը մթնում է, — ասաց Միքէլը, —  
մենք ուշանում ենք, մեր առջև դեռ բա-  
ւական ճանապարհ կայ մինչև Արամի դիր-  
քերը. ձեզ հարկաւոր ապրանքը առէք, իսկ  
մենք կը շարունակենք:

— Մենք բաւական պաշար ունինք, —  
ասաց Սմբատը, — բոլորը հասցրու Արամին  
և նրան յանձնիր, իսկ եթէ մեզ հարկ լինի,  
կարող ենք նրանից վերցնել: Դուք, Արշակ  
և Սուրէն, — կարդաղրեց նա, — գնացէք Մի-  
քէլի սայլի հետ, իսկ դու, Արսէն, լուր տար  
Տիգրանին, որ ձիեր պատրաստէ:

Արսէնը կորսուեց անտառի մէջ: Մի-  
քէլի սայլը առաջ շարժուեց: Ճանապարհի  
երկու կողմից գնում էին Արշակն ու Սու-  
րէնը, իսկ մէջտեղից Կարօն: Նրա ոգես-  
րութիւնը այժմ սահման չունէր, երբեմն  
յետ էր գառնում, աչքի տակով նայում օ-  
րիորդին թէ անդեօք նա ուշադրութիւն  
դարձնում է իրան:

V

Արևմտեան հորիզոնում ամպերը կուտակվել էին, նրանց միջից իբրև երկնային թագուհի արել՝ քօղարկւած նուրբ, կարմիր շղարշներով, կարծես շտապում էր մտնել բարձր սարերի յետե, որպէսզի չը տեսնէ երկրի վրայ կատարւող ոճրագործութիւնները, չը նկատէ՝ թէ ինչպէս մարդիկ գաղան գարձած բզկտում են միմեանց։ Ահա երկինքը շառագունվեց, բոցավառվեց, կարծես մի սոսկալի հրդէն կար այնտեղ, որից բոնկւեցին լեռների կատարները, ժայռն ու անտառը. մի քիչ էլ, և ահա ամեն բան վերջացաւ։ Խաւարը սկսեց իւր սև թևերը տարածել շրջակայքը։ Գիշերւայ թագուհի Լուսինն էլ այսօր ուրախ, համարձակ չէր ձեմում իւր երկնային առագաստի մէջ. նըրա արբանեակ աստղերն էլ թագցը էլ էին իրանց դէմքը, նրանցից ոմանք երբեմն՝ չարածճի երեխայի նման, բաց էին անում իւրանց պսպղուն աշիկները, նայում իրանց թագուհի Լուսնեակին և տեսնում թէ նա ինչպէս սև, թափանցիկ քօղով պատաժ, կարծես սարսափահար շտապում է դէպի իւր

մուտքը... Այս բոլորը չեր պրաւում Արմէնին, նրա միտքը ուրիշ տեղ էր, հեռուից երևացող այն բարձր ժայռերի կատարներին, ուր թառած է իւր սիրելի Արամը իւր կտրիճ ընկերներով։ Նա մտածում էր ինչպէս հանդիպել նրան և ինչպէս զաղել իւր բուռն գգացմունքները, որից քիչ էր մնում, որ նրա սիրաը պատովէր։

Ճանապարհի խիստ նեղութեան պատճառով Միքէլը կանգնեցրեց սայլը և ըսկեց ծտի նման ծղրտալ, նոյնպիսի ձայն լուեց և քարերի միջից։ Մինչդեռ ոտնաձայները մօտենում էին, Արմէնը հանեց իւր կանացի շորերը, թաղեց քարերի տակ և ասաց՝ «Դուք խանդարում էք իմ ազատ շարժումներս, կացէք այստեղ, մինչև կը լսէք յարութեան փողերի ձայնը»։ Նա այժմ հագել էր տղամարդի շոր, կապել փամփուշտականեր և հրացանը ձեռին պատրաստ կանգնել էր սայլի մօտ. իսկ երեք զինւորները զանազան կէտերում դիրքեր էին գրաւել։

— Օ՛, որքան է յարմարւում ձեզ, օքինրդ, այդ գէնքերը, հիացած բացականչեց Միքայէլը։—Ես նախազգում եմ, որ ձեզնից շատ բան է կախւած և ձեզ վիճակւած

է մեծ գործ կատարել մեր արխւնու կեանքում:

Ոտնաձայները շատ մօտեցան և լուեց նոյն ծղրտոցը, նոյնակէս պատասխանեց Միքէլը: «Գիշերւայ անունը» լուեց մի ձայն:— «Սոսի» պատասխանեց Միքէլը: Յայտնուեց Արսէնը, երեք ուրիշ զինւորների հետ, ուրոնք իրանց ետելից բաշում էին երեք հատ ձիեր:

— Դու, ԱՌԱԷՆ, տասց Միքէլը, առ սայլը, վերադարձիր ձեր զիրքերը, իսկ ես կը բարձրանամ մինչև Արամի մօտ:

Նեղ շաւիդներով նրանք ճանապարհը շարունակեցին զէպի վեր: Կարօն և միւս երկու զինւորները՝ հիացան երբ տեսան օրիորդին կերպարանափոխւած, զինավառ, տասն և ութ տարեկան պատանու նման: Արտերը սկսեց մի ուրախ զգացմունքով բարախել:

— Դու այժմ հիանալի զինւոր ես դառել, օրիորդ, տասց կարօն:

— Ոչ միայն հիանալի զինւոր՝ է, — ընդհատեց Միքէլը, — այլ և երկնային ողի՝ ուղարկւած հայ քաջերին պաշտպանելու համար: Հաւատացիր, կարօ, այն գործում և կոխւներում, ուր մասնակցում է և կինը, մահը՝ հարսանիքէն աւելի ուրախ է լինում, իսկ

յաջողութիւնը՝ ամեն կերպ ապահովւած։

Հեռուից պէծին էին տալիս ճրագի լոյսեր և լսվում էր շների հաչոցը։

—Ահա այն է Վ. գիւղը, —ցոյց տւեց Միքէլը, —որի վրայ երկու անգամ յարձակվեցան և մեծ ջարդ ուտելով՝ յետ փախան։ Կրկին այս գիւղի վրայ սպասվում է յարձակում։ Շատ է զայրանում թշնամին ամեն անգամ, երբ ջարդվում է. նա իւր կատաղութիւնը՝ գաղանութեան է հասցնում։ Այս անգամն էլ դուք պիտի տեսնէք թէ ինչպէս պիտ փախչին այդ անպիտանները, որոնք մոռանալով իրանց դարեւոր հարեանութեան պարտականութիւնները, ուրանալով հայի հետ կերած հացն ու աղը, այս անգամ սկսում են գաղտնագողի ձորերի միջից միամիտ ճանփորդներին սպանել ու գերել, կողոպտել ու այրել անպաշտպան գիւղերը։ Իսկ երբ դէմ կը կանգնեն ֆէտահին՝ փախչելու ծակեր են որոնում։

Բաւական բարձրացել էին։ Արամի գիրքերը այժմ շատ հեռու չեն։ Զը նայելով մի քանի օրւայ յոգնածութեան և անքնութեան՝ օրիորդը ոչ մի դժվարութիւն չէր զգում ոտքով բարձրանալ բլուրներից ու ժայռերից։ Նրան մազնիսացրած քաշում էր

մի ուժ, մի սիրտ, որ յաւիտենական կերպով միացել էր նրա սրտի հետ, նրան յառաջ էր մղում և ուժ տալիս մի մեծ զիտակցութիւն... և նա ուրախ էր զգում իրան, որ այնպիսի ժամանակ հասաւ, երբ ինքը հնարաւորութիւն կ'ունենայ ցոյց տալ թշնամուն, որ հայ կինը այնքան ստոր և թուլամորթ չէ, որ ամեն մի վայրենի հակումներով տոգորված մարդ կարողանայ նրա պատիւը շօշափել:

Լուսինը՝ զըեթէ առանց իւր դէմքը ցոյց տալու, թագնուել էր լեռների ետև։ Սի ամպերը սկսել էին կուտակվել բարձր լեռների վրայ և երկինքը կամաց—կամաց ծածկվում էր հաստ սև վարագոյրով, որոնց միջից երբեմն փայլում էր կայծակը, կարծես սպառնալու համար աշխարհին։ Գիւղից լսվում էր շների խառնիճաղանձ ոռնոցը և ամբողջ ընութիւնը մի ինչ որ, անորոշ, տխուր նախազգացումով էր համակւել։ Գիւղի մօտերից լսւեց մի սուլոցի ձայն, — դա սուրհանդակի սուլոցն էր, որ իր խորհրդաւոր ձայնով լուր էր տալիս թէ «զալիս են»։ — «Պատրաստ» հրամայական եղանակով հնչեց մի տղամարդի ձայն։ Արմէնը լսեց և ճանաչեց, — դա Արամի ձայնն էր, և

Նրա սիրտը սկսեց արագ-արագ բարախել.  
Նա այժմ ոչ թէ գնում, այլ ուղղակի թըռ-  
չում էր. «Չլինի, մտածում էր նա,—չը  
լինի թէ շուտով սկսվի և ես չը կարողանամ  
նրան տեսնել, սրտիս մէջ կուտակւած կրակը  
նրա առջեր թափել... 0'... դա սարսափելի  
է»: Եւ նա թոշում էր առանց ուշադրու-  
թիւն դարձնելու ահազին դժուարութիւն-  
ներին, քարերին ու փշերին. ընկնում, ել-  
նում էր. Նրա ձեռքերը արդէն արիւնալւայ  
էին դառել և նա ոչինչ չէր զգում, ամքողջ  
հոգով այն ժայռի մօտն էր, որտեղից լսեց  
Արամի ձայնը, բայց նա զեռ բաւական հե-  
ռու էր:—«Պատրաստ, պատրաստ,» արձա-  
գանք տւեց ամեն կողմերից՝ և այժմ միայն  
Արմէնը խմացաւ, որ իրանք գտնվում են  
հայկական թագնւած բանակի մէջ: Նրա  
սիրտը մի փոքր հանդարտվեց, երբ տեսաւ  
իրան շրջապատւած ամեն կողմից հայ կրտ-  
քիճներով:

Գիւղի մօտերը ոչինչ չի երևում, մի-  
այն երբեմն լավում է ձիերի ուսների տրո-  
փիւնը և զէնքերի չխէչխկոցը. յանկարծ  
փայլեց բոցի նման մի բան և լսեց հրա-  
ցանի տրաքոցը, դրան հետեւից մի համա-  
գարկ զիւղի վրայ, յետոյ երկրորդը... Բայց

զիւղից պատասխան չկայ: Թշնամին սիրո  
առաւ, նրա աւերելու ու կողոպտելու  
տենչը վառւեց, «Եա Ալի,» գոռալով խու-  
ժեց դէպի զիւղը, բայց գերեզմանատան  
կողմից լսուեց մի համազարկ, որից ար-  
ձագանք տւին լեռներն ու ժայռերը:

— Սա արդէն մերոնք են, -«Ճան, տղերք,  
Ճան, ձեր ջանին մատաղ,» ողեորված գո-  
ռաց Միքէլը:

— Այ, Միքէլ, այդ դժւ ես. բարով ես  
եկել, — ասաց նրան մթութեան միջից մօ-  
տեցող մի տղամարդ, — մի ասա, ասեղներ  
բերել ես, խնձորներ ունես:

— Միքէլը հօ դատարկ չէր դառնայ, —  
պատասխանեց նա, — ասեղներն էլ, խնձոր-  
ներ էլ, որքան կուզես, Գնուրդէն:

— Ասլրիս, դու Միքէլ: Տեսնում ես  
արդէն սկսվում է և եթէ չը հասնէիր, բա-  
ներս բուրդ կը դառնար, ասաց Գուրգէնը  
և բարձր ձայնով կանչեց թէ հասաւ: Ա-  
մեն կողմից արձագանքը կրկնեց. «Հասաւ»,  
Այս բառը չափազանց ուրախութիւն պատ-  
ճառեց ամբողջ բանակին, որովհետեւ ամեն-  
քը զիտէին թէ ինչ է նշանակում հասաւ,  
որին անհամբեր սպասում էին և բոլորը  
օրհնեցին հասցնողի կետնքը:

—Հարիւրանկան. —գոռաց Արանը իւր զիրքից: Գուրզէնը ձիերի բեռները վար իջեցրեց, և ամեն վրա հասնողը առաւ իւր հարիւրն ու քաշւեց իւր տեղը:

Գիւղի մօտ փոխադարձ հրացանաձգութիւնը սաստկացել էր. ահա և մի մարագ էլ բռնկւեց: «Յառաջ», գոռաց Արամը և սկսեց զիրքերից ցած իջնել, ամեն տեղից հետեւեցին նրան, իւրաքանչիւր զիրքուժ թողնելով երեք զինւոր:

—«Ահա, ահա... նա գալիս է դէպ ինձ, —մտածում էր Արմէնը, —Օ՛, որքան բախտաւոր եմ ես և երջանիկ: Արդեօք նա գիտէ, որ ես այստեղ եմ... Ոչ, ոչ, եթէ իմանար անշուշտ մինչև այժմ ինձ մօտ հասած կը լինէր: Ա՛խ, այս մութը խանգարում է ինձ, որ տեսնեմ նրան զինւած, հիանամ նրա տեսքով, գոնէ կարողանայի նրա հետ խօսել, նրան պատմել թէ ես եկել եմ քեզ հետ մեռնելու, քո նպատակներիդ մատաղ գնալու... ահա, մօտեցաւ. «Արամ, »—սեղմած շրթունքների միջից հընչեցրեց նա: —Լսեց արդեօք Արամը. —ոչ, եթէ լսէր կը վազէր ինձ մօտ... Գնամ, գնամ նրա մօտ և յայտնեմ թէ ես այստեղ եմ....: Նա մի երկու քայլ առաջ գնաց և

կանգնեց: Ո՞չ, ոչ... Այսպէս յանկարծակի նրան յայտնուիլը, կարող է շփոթեցնել նրան, իմ ներկայութիւնս կարող է պղտութել նրա միտքը, նրա ուշադրութիւնը գրաւել և նա կը թուլանայ կատարելու իւր ստանձնած պարտականութիւնը, կամ կը խնայէ իւր կեանքը իմ սիրոյ ըամար... ոչ, ոչ, ես առայժմ նրանից անյայտ կը մնամ: Նա պատվիրեց կարօին և Միքելին, որ իր մասին ոչ ոքի չը լայտնեն:

Արամը մօտեցաւ, բարեկց Միքելին:— Այս տղերք էլ ձեզ հետ են եկել, — հարցրեց նա, — միացէք մեզ հետ, — ասաց և առաջ անցաւ: Նա մթութեան մէջ չը նկատեց Արմէնի դէմքը և եթէ ցերէկ լինէր՝ նա դարձեալ չէր կարող ճանաչել, որովհետեւ նրա միտքը զբաղւած էր խիստ կարեւը, — լինել չը լինելու ինդրով: Արմէնի սիրար լցւած անհուն սիրով, խորին համակրութեամբ, հաղիւ էր իրար զսպում և քաջերի հետ առաջ գնում:

Աղամայ մթնիկը արդէն սկսել էր ցըրւել: Երկինքը ծածկուած էր հաստ մոայլ

ամպերով, որոնք քուլա-քուլա վազում էին  
դէսի արևելք, կարծես ծածկելու արևի ծա-  
զումը, որպէսզի նա չը տեսնէ աշխարհի  
շարութիւնները, որոնց այնքան վկայ էր  
եղել նա և այնքան ձանձրացել: Հատ-հատ  
հրացանաձգութիւնը շարունակվում էր խու-  
ժանի կողմից, որին նոյնպէս պատասխա-  
նում էին զիւղից և գերեզանատնից, որի  
մօտերը կենտրօնացրել էր թշնամին իւր  
ուժերը: Մթութեան մէջ նա չէր նկատել  
թէ ինչպէս բարձր տեղերից իջնողները  
դիրք էին գրաւել իրանց թիկունքի կողմը  
և թէ իրանք արդէն մնացել էին երկու կը-  
րակների մէջ: Այն թշնամին, որ այնքան  
արհամարանքով էր նալում հայի անւան  
վրայ, նա, իհարկէ, չէր կարող գաղափար  
կազմել նրանց պատերազմական հմտութեան  
մասին: Թշնամին, ծուղակի մէջ չընկնելու  
համար՝ մութ ժամանակ յարձակում շարեց  
զիւղի վրայ. միայն բաւականացաւ պաշա-  
րելով և մի քանի մարագներին կըակ տա-  
լով, որով սարսափ պիտի ազդէր պաշար-  
ւածներին. Նա ընդհանուր արշաւանքը յե-  
տածգել էր, որպէսզի իրանց բոլոր ոյժերը  
հաւաքվին և արշալոյսին սկսեն յարձակումը:  
Մութը բաւական փարատւել էր՝ այժմ

արդէն գայլն ու ոչխարը կարելի էր որոշել: զիւղից և թիկնային դիրքերից երեսում էր խառնիճաղանձ ամբոխը, զանազան գրօշակ ներով, կանանչ չալմաներով. երեսում էն նոյնպէս էշեր ու ծիեր, ծիաւոր ու հետիւոտն մարդիկ: Լսւեց մի խրոխտ ձայն և ամբոխը՝ եա Ալի, գոռալով սկսեց գրոհ տալ զիւղի վրայ: Համազարկները հետեւցին միմեանց: Նոյնպէս պատասխանում էին պաշարվածները:

—Մի՞թէ տղերքը չը հասան, զարմացած մտածում էր Երւանդը, բայց այդ դէպքում ինչ կը մինի մեր դրութիւնը. մի՞թէ Արամը չի լսում հրացանների ձայները. կամ նա չը գիտէ, որ ես իմ խմբովս պաշարվել եմ գիւղում: Դէհ, ձեզ մատաղ տրդերք,—սկսեց խրախուսելով կանչել նա, — խփեցէք, մի թողաք, որ գիւղ մտնեն, ուր որ է, սարի թառածները այժմ կը հասնեն...

Դեռ խոսքը չէր վերջացրել, երբ մի հրացանի տրաքոց լսւեց այգիների կողմից, նրան յետեւց ամեն կողմից համազարկներ:

—Զան, ջան, եկան ժայռերի արծիւները, ջան, մի վախնաք, տղերք խփեցէք, գոռացին պաշարվածները:

Թիկունքի կողմից արձակւած առաջին

կրակներից ոչ ոք չընկաւ, գնդակները  
բարձրից էին գնում: Թշնամին կարծեց թէ  
դա իւրայիններն են և ուշադրութիւն չը  
դարձրեց այն կողմը, իսկ դիւղի կողմից  
սուլում էին գնդակները և դիակները փրո-  
վում էին, որոնց վրայից անցնում էին ու-  
րիշները և նոյն վիճակին ենթարկվում:  
Դարձեալ մի համազարկ թիկունքի կողմից  
և այս անդամ ընկան մի քանի տասնեակ:  
Աղմուկն ու իրարանցումը աիրեց: Այժմ  
թշնամին հասկացաւ, որ ինքը մնացել է  
երկու կրակների մէջ....: Հրացանների տը-  
րաքոցները սաստկանում և թնդացնում էին  
օդն ու լեռը, իսկ վախն ու շիոթը՝ համա-  
կեց ամբողջ խուժանը: Նրանք այժմ՝ թէն  
արձակում, բայց չէին իմանում թէ ուր են  
գնում գնդակները: Իւրաքանչիւրը փախչե-  
լու տեղ էր որոնում:

— Դէ՞հ, քաջ տղերք, յառաջ, գոռաց  
նրւանդը և սկսեց հակայարձակումը: Այժմ  
փախուստը արդէն կատարեալ էր, թշնա-  
մին փախչում էր ով ինչպէս կարող էր.  
դուքս եկան թիկնային կովողներն էլ և  
սկսեցին հալածել....: Յանկարծ բլուրի այն  
կողմից երկացին մի խումբ ձիաւորներ, ո-  
րոնց առաջնորդը սկսեց գոռալ,—Այ, ուր

էք փախչում, էյ նամարդներ, միթէ արարժանի է խլամի որդուն փախչել գեաւուրների առջեկց. դուք դժոխքի ծնունդներ, մեծ Մարգարէի անունն էլ անպատճեցիք, յետ դարձէք՝ եթէ ոչ բոլորիդ էլ կը կոսորեմ:

Փախչող խուժանը կանգ առաւ և ըստկուց դիմադրել: Հալածողներն էլ, որքան հնարաւոր էր՝ դիրքել զրաւեցին: Կոփւը աւելի սաստկացաւ: Թուրքերի բոլոր յարձակումները ապարդիւն անցան: «Յառաջ»—լուեց Արամի ձայնը, և այս անգամ յարձակումը սկսւեց հայերի կողմից: Դիրքերից դուրս թռաւ մի պատանի և կրակելով վազում էր դէպի թշնամին և նրանց շարքերից գլորվում էին:

—Շէյթան, շէյթան, —Գոռում էին թուրքերը և յետ քաշվում: Արամը խրախուսում էր քաջերին և ամբողջ թափով նետում, նու հիացել էր խիզախ պատանու քաջութեանը և գովում էր Միքէլին և հարցնում, թէ որտեղից եկաւ այդ քաջտղան: —Դու, յետոյ կիմանաս,—պատասխանեց Միքէլը:—կաց, այ, տղայ, կաց, գամ ճակատգ համբուրեմ,—կահչեց Արամը:—Ռէ, ոչ, այժմ ժամանակ չէ.—պատաս-

խանեց տղան և անընդհատ կրակելով առաջ էր գնում: Նրա ձայնը կարծես ծանօթ թւաց Արամին, բաց նա չը մտարերեց...:

Սաստիկ կրակի տակ՝ թուրքերի մէջ ընկաւ շփոթն ու իրարանցումը. հրամայող ձիաւորը արգելեց նրանց փախչել:—Շըջապատել թշնամուն,—հրամայեց Արամը: Շըջայաձե երկարացաւ կովողների շարքը և երեք կողմից սկսեց կրակ տեղալ: Ձիաւորը սպառնում էր խուժանին. ստիպում էր կրոմել, դիմադրել և ինքն էլ առաջ անցած կրակում էր աջ ու ձախ: Պայթեց մի հրացան, սուլեց գնդակը, դիպաւ ձիաւորի կրծքին և նա քաշ ընկաւ: Այս, քո ջանին մատաղ, Արմէն, կանչեց կարօն, որ մօտ էր.— սա էլ իմ բաժինս,—և արձակեց հրացանն ու մի այլ ձիաւոր գլուխեց: Ամեն կողմից յարձակումը խստացաւ: Թշնամին գլուխը կորցրած սկսեց փախչել դէպի իրանց գիւղը, որ շատ հեռու չէր:—Տեսնում ես, Արմէն, ինչպէս են փախչում նապաստակները,—ասում էր կարօն և վազում նրանց ետևից: Փախչողները երբեմն յետ դարձած կրակում էին. սուլեց մի գնդակ և կարօն ինչ որ ջերմութիւն զգաց իւր կողքին, նա դարձեալ կրակում էր: Արմէնը ա-

ուած էր անցել: Կարօն ինչոր թացութիւն զգաց ջերմացած տեղը, ձեռքը տարաւ և տեսաւ որ արիւնոտել է: Առանց ուշադրութիւն դարձնելու ուզում էր քայլերը արագացնել, բայց ոտքերը նրան չէին հնապանդվում, քիչ էլ, և նա արիւնաքամ եղած, ուժասպառ վայր ընկաւ: Ընկերներից մինը գնաց մօտը, վերցրեց վլուխը. բայց արդէն ուշ էր... նա վերցրեց ընկերոջ անշունչ դիակը և տարաւ մի կանաչոտ փոսիկ:

Թշնամին արդէն մտել էր իր զիւղը և այնտեղից ուժեղ դիմադրութիւն ցոյց տւեց: Հայերի զայրոյթն իր գագաթնակէտին էր հասել: Երկու կողմի հրացանաձգութեան որոտը ականջ էր խլացնում և գնդակները վժժալով անցնում էին: — Կրակ տներին, — կանչեց Արամը: Պատանին անվհեր խիզախութեամբ, միշտ կրակելով, վերջապէս մօտեցաւ մի տան, որտեղից շարունակ թրչում էին գնդակները և կրակ տւեց այդ տանը, որից ծուխը սկսեց բարձրանալ, և մինչդեռ նա պատրաստվում էր առաջ գնալ՝ վզզաց մի գնդակ և անցաւ նրա ականջի մօտով: Պատանու աշքերը արիւնով լցւեցին և քաշելով ատրճանակը՝ արձակեց ուղղակի իրան արձակողի կրծքին: Նա ընկաւ: Կրակը

տարածւեց։ Կրակի մեջից սկսեցին փախչել երեք ուրիշներ, որոնցից մինը դարձեալ գլորվեց Արմէնի ատրճանակի հարուածից։ Այս անգամ նա համբուրեց ատրճանակը և սկսեց աջ ու ձախ կրակել։ Քամին փչում էր և հրդէնը բռնել էր արդէն մի քանի տրներ, որ տեղերից շարունակ տրաքվում էին հրացաններ։ —Պատանին վտանգի մէջ է, — զոռաց Արամը. — համազարկով յարձակում. — և առաջ անցաւ։ Բոլոր հրացանները տրաքեցին, սկսեց յարձակումը։ Կրակների միջից թնթաց մի հրացան, թուաւ գնդակը և կպաւ Արամի կրծքի ձախ կողմը։ Նրա աշքերը մթնեցին և ձեռքերը այլիս չը հնազանդւեցին զէնք բարձրացնելու։

— Տղերը, կանչեց նա. — ես վիրաւորվեցայ, բայց դուք այս գաղանների որջը առանց քարու քանդ անելու՝ չէք վերադառնալ։

— Արամը վիրաւորված է. — կարծես մի ելեքտրական հոսանք փսփսաց բոլորի ականչին, կարծես մի սառը ջուր ածւեց բոլորի գլխին, և ոչոք չէր ուզում հաւատալ, իւրաքանչիւրը ցանկանում էր վագելնրա մօտ և տեսնել...

— Տղերք ջան, Արամը վիրաւորված է,

իսկ մենք չը պէտք է շփոթվենք և դրանով խորացնենք նրա վէրքը, — կանչում էր երւանդը, — մեր առջեր կայ մի մեծ գործ, — կատարենք այդ պարտքը անվեհեր տոկանութեամբ, չը ստորացնենք հայ զինւորի պատիւր: Յառաջ, յառաջ, մինչեւ կատարւի Արամի ցանկութիւնը:

— Յառաջ, յառաջ — մրմնջում էր Արամը ընկած տեղից:

Երկու զինւոր վերցրին Արամին ուշաթափ...

Խումբը զայրացած, կրակ կտրած արշաւեց դէպի գիւղը, թշնամին չը կարողացաւ դիմանալ և նահանջեց, իսկ զայրացած քաջերը հալածեցին նրանց: Արմէնը, որ շարունակ հետևում էր թշնամուն և միշտ կովելով ու այրելով էր զբաղւած, ոչ կարօի ընկնելը և ոչ Արամի վիրաւորվելը զիտէր, այժմ երբ տեսաւ, որ քաջերի մէջ չի երեւում Արամը, չի լսվում նրա ձայնը՝ մի տիսուր զգացմունք պատեց նրա սիրտը: Ո՞ւր է Արամը, — մտածում էր նա. — թշնամին փախչում է, իսկ նա չկայ, քաջերի դէմքերը չեն փայլում ուրախ ժայխաներով: Զը լինի...: Ո՞չ, ոչ, այդ չի լինի, թշնամու գընդակը նրան չի դիպչի... նա կըմնայ, ինձ

համար կապրի... նա դեռ չը գիտէ, որ ես  
եմ, իր պաշտած Արմէնը։ Քիչ մնաց և նա  
ամեն բան կիմանայ...։ Բայց Կարօն էլ չը-  
կայ... նա էլ՝ երեխ Արամի մօտն է....

Գիւղը թշնամի չը մնաց և Արմէնը մի  
տխուր զգացմունքով պաշարւած նայում էր  
կրակին ու բոցին, կարծես նա զզջում էր  
իր արածները.—Այս դու, անգոյթ, յիմար  
թշնամի, քան'ի, քան'ի հայ դիւղեր ես ա-  
րել այսպէս, այժմ էլ քոնն է լինում։ Մե-  
ղաւորը մենք չենք, մըմնջում էր նա,—  
բայց այն ի՞նչ ձայներ են լսվում այն տան  
միջից, որ նոր է բոնկւել։ Եւ Արմէնը թուաւ  
այն կողմը, մի երկու աքացի, և փակւած  
դուռը խորտակւեց։—Ո՞վ էք այդ տեղ, դուրս  
եկէք, —կանչեց նա, և ուրւականների նման,  
գեղնած, մեռելի գոյն ստացած, վախվսելով  
դուրս եկան այնտեղից քսանի չափ կանայք,  
աղջիկներ ու երեխաններ թրքական շու-  
րերով։

—Ի՞նչո՞ւ դուք մենակ մնացել էք այստեղ.  
—Հարցը Արմէնը։

—Մենք, աղայ... հայ... ենք։—զմզմա-  
լով պատասխանեցին նրանք։

Արմէնը այդ «հայ» բառից ամեն բան  
հասկացաւ։

—Մենք էլ հայ ենք: Դուք այժմ ազատած էք, օրհնեցէք հայ կտրիմների կեանքը:

—Աստւած... Աստւած...—մրմնջացին նրանք և այլիս խօսք չը գտնելով արտասահնելու, ընկան Արմէնի և շրջապատող զինւորների վզով:

—Ա՛խ, եթէ շուտ հասնէիք, այժմ իմ Հայկս կեսդանի կը լինէր, լալով ասում էր մի հասակաւոր կին: Ապա իմ Տիղրանը... իմ Շողինկը. իմ... իմ...—լսվում էր արտասուքների մէջից անուններ: |Եւ առիւծները և ազատած գերիները հեկեկում էին երեխայի նման: Տեսարանը սրտաճմիկ էր, իսկ կրակը լսվում էր աւազակների որջնու յառաջ գնում:

### VIII

Մութն ու սե ամպերը ծածկել էին երկնակամարը, քամին սաստկանում էր և կայծախառն ծուխը վեր հանելով՝ խառնում էր մռայլ օդի հետ և բնութեանն աւելի ահուելի կերպարանք տալիս: Գործը վերջացրած, յոգնած, ջարդւած հայ խումբը հանգստանալ էր ուզում, բայց ուր է խրմբապետը, ուր է Արամը: Փողը հնչեց և տղերքը հաւաքվեցան:

— Գնանք, քաջեր, Արամի մօտ, նա վիրաւորված է, — ասաց Երւանդը:

— Արամը վիրաւո՞ր է, — հարցրեց Արմէնը, — կարծես չը կամենալով հաւատալ իւր ականջներին: — Իսկ կարօն, կարօն ուր է: Նա էլ... Նա էլ... Գուցէ...

Կարծես մի սուր ոլաք խփեցին նրա սրտին, կարծես մի ծանր քար ընկաւ նրա զլիսին, աչքերը մթնեց, լեզուն կապւեց: — Օ՛, Արամը... Արամը... Սկսեց կանչել նա և վագեց դէպի այն կողմը, ուր ընկած էր վիրաւորը:

Կուի, շվոթութեան ժամանակ, նրա մազերը քանդւել խառնուել էին. քամին էլ թոցրեց զլխարկը և նա հերարձակ խելազարի նման վազում էր, իսկ զիժ քամին կարծես կատակներ էր անում, խազում նրա արձակ մազերի հետ, ֆռֆռացնում նրանց: Բնկերները զարմացած հետեւում էին երկարամազ պատանի քաջին և միայն խոր ցաւ զգում:

— Արամը այստեղ, ով երկինը... ասաց և ընկաւ նրա վրայ: — Տւէք, տւէք, — կանչում էր նա, — տւէք ինձ ատրճանակս, այլ ևս իրաւունք չունեմ ասլրելու: — Նա քաշեց ատրճանակը, մօտեցրեց քունքին: Միբէլը թոցրեց նրա ձեռքից: — Տւէք տւէք, — կան-

չում էր նա, — ես էլ չեմ կարող ապրել: —  
Բոլոր զինւորները շրջապատել էին նրան և  
ոչինչ չէին կարողանում ըմբռնել: Բոլոր  
առիւծները երեխայի պէս լալիս էին:

— Արամ, Արամ, — շարունակում էր  
նա, — մի ձայն առւր, մի աչքերդ բաց արա,  
տես, ես եմ, բո Արմէնը... Վերջի անւան  
հնչիւնը կարծես մտաւ Արամի ականջը,  
և նա ուշքի գալով բաց արեց աչքերը,  
բռնեց Արմէնի ձեռքից և անթարթ սկսեց  
նայել նրա գէմքին: — Արամ ես եմ, քո  
Արմէնը, որ սարեր ու ձորեր եմ անցել,  
քռն ու հանգիստ չեմ եղել, եկել եմ քեզ  
մօտ, քեզ տեսնելու, բաջերովդ ոգեորգելու,  
քո նպատակներին մատաղ գնալու: Նայիր,  
նայիր, խղճա ինձ, մի թողուր անմիտար,  
դեռ շատ գործ ունիս կատարելու. դեռ քո  
սիրած հայի ցաւերը չեն բռւժվել... ասա,  
խօսիր... թէ ոչ չեմ ապրիլ, ես էլ կր մեռ-  
նեմ, քեզ հետ գերեզման կիշնեմ...:

— Ա՛, այդ դժւ ես, Արմէն, Դժւ էիր  
այն քաջ կովողը, դժւ էիր ինձ հիացնողը...  
Աստւած իմ...: Արմէն, քո սէրդ անհուն է  
գէպի ինձ, դու անկեղծ սրառվ ես սիրում  
քո հայրենիքդ, քո վիրաւոր, ցաւոտ հայ-  
րենիքդ, որ քեզ նմանների է կարօտ: Ես

ուրախ եմ... ես երջանիկ եմ... իմ վերքս  
շատ՝ էր ցաւում, երբ առանց քեզ տեսնելու  
մեռնէի... իսկ այժմ... այժմ հանգիստ եմ...  
վերքս էլ չի ցաւում. ես խարւած չեմ...  
Օ՛... որքան բախտաւոր եմ եղել ես...  
Բայց դու, Արմէն, խօսում էիր մահւան մա-  
սին... դու պիտի չը մեռնիս, դու դեռ ապ-  
րիր, շարունակիր կոփւր, մինչև կը դադրի  
հայի լայն ու արցունքը, մինչև կը կանգնին  
հայի արեան հոսանքները... Հոդ չէ, ես կը  
մեռնիմ... իսկ դու սիրիր հայ ազգը, նրա  
դարպն ու վիշար, այս է իմ վերջին կտակս,  
քեզ եմ յանձնում, առ իմ զէնքերը, մի  
թողուլ իմ քաջերին անմխիթար, եղիր նը-  
րանց պահապան հրեշտակը... Ահա ձեզ,  
տղերք, իմ սիրած հերոսունին, յանձնում  
եմ նրան ձեզ... հայ կնոջ, հայ աղջկայ  
պատիւր դուք պիտի պաշտպանէք, հայ դիւ-  
դացու աշխատանքը տաղանովէք... Ա՛յս...  
վերքս... վերքս շատ է ցաւում... նա շատ  
խորն է.... Եկեք իմ քաջեր... մօտեցեք  
համբուրեմ ձեր արնոտ ճակատը... տում  
ձեզ իմ վերջին հրաժեշտը... իսկ քեզ հետ,  
Արմէն, մենք երկնքում կը տեսնուինք...:

Մահւան տաղնապի մէջ տառապով ա-  
սիւծը քաշեց օրիորդի ձեռքը, հպեց ար-

թունքներին...: Օրիորդը կռացաւ համբուլեց սառն քրտինքով պատած նրա ձականըն և ուշաթափւեցաւ:

Արտասուքը հոսում էր բոլոր քաջերի աչքերից, մայրը կորցրած զառի նման մըղեկտում էին ազատւած գերիները: Տխուր, սրտակոտոր երիտասարդները բերին այնտեղ և կարօի դիակը: Սառը ջուր էին ցանում ուշաթափւած օրիորդի գէմքին... Նա ուշի եկու, բաց արեց աչքերը, կարծես մի բան մտարերելով վեր երաւ:

— Ահա երկու դիակ.—սկսեց նա.—սա էլ կարօն է: Իմ խեղճ կարօ, Դմւ էլ ես ընկել, իմ թանգակին ընկեր...: Մի զոյզ նոխազ ևս անսիրտ երկնքին..., մի զոյզ զոհ հայրենիքի ազատութեան սեղանին....: Երդվում եմ ձեր արիւնով. ձեր լոյս հոգիները վկայ թող լինեն, որ չկայ այլիս ինձ համար մարդկային սէր: Պիտի սիրեմ, պիտի աշխատեմ ձեր սիրած, ձեր փայփայած զաղափարները: Եւ այս սուրը՝ որ այսօր այսքան արիւն հոսեցըեց, այս հրացանը, որ այնքան թշնամի կեանքից զրկեց, ձեռքիցս վար չի ընկնիլ՝ մինչև շը դադարի հայի լացն ու կոծը, երդւեցէք, և դուք քաջ տղերք հետեւ ինձ, լինել հաւատարիմ:

—Երդվառմ ենք, երդվում ենք, լուեց  
ամեն կողմից:  
Գիւղում սպասում էին....





